*երկրորդ ընթերցում*
*Լրամշակված նախագիծ*

*Կ-359[1]-22.08.2022-ՏՀ-01*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

### «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի «Կառուցապատողները պարտավոր են» պարբերության ժ) կետում «շինարարության թույլտվությամբ» բառերը փոխարինել «շինարարության կամ քանդման թույլտվությամբ» բառերով :

***Հոդված 2.*** Օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել 27-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.
«27) հաստատում է կառուցվող, հիմնանորոգվող, վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, ընդլայնվող, արդիականացվող, վերազինվող, նորոգվող, քանդվող կամ ապամոնտաժվող շենքերի, շինությունների կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշները:»:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Երկրորդ ընթերցում*

*Կ-359[1]-22.08.2022-ՏՀ-011/1*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

### «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1***. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի ~~«Կառուցապատողները պարտավոր են» պարբերության~~ 4-րդ մասի [r1] ժ) կետում «շինարարության թույլտվությամբ» բառերը փոխարինել «շինարարության կամ քանդման թույլտվությամբ» բառերով:

***Հոդված 2***. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել ը) պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«ը) հաստատում է կառուցվող, հիմնանորոգվող, վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, ընդլայնվող, արդիականացվող, վերազինվող, նորոգվող, քանդվող կամ ապամոնտաժվող շենքերի, շինությունների կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշները: »[MH2]

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ <<ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ** (Կ-359-22.08.2022-ՏՀ-011/1, Կ-359$^{1}$-22.08.2022-ՏՀ-011/1)

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | ՀՀ կառավարություն | «Քաղաքաշինության մասին» | Նախագծի 1-ին հոդվածի՝ «Կառուցապատողները պարտավոր են» բառերը առաջարկում ենք փոխարինել «4-րդ մասի» բառերով՝ հիմք ընդունելով | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված | «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետը: | | |
| 2. | ՀՀ կառավարություն | «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ | Առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր 2-րդ հոդվածով, հետևյալ բովանդակությամբ՝ հիմք ընդունելով Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսված պահանջը.<br><br>«Հոդված 2. Օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել 27-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.<br><br>27) հաստատում է կառուցվող, հիմնանորոգվող, վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, ընդլայնվող, արդիականացվող, վերազինվող, նորոգվող, քանդվող կամ ապամոնտաժվող շենքերի, | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | շինությունների , կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշները:»: | | |
| 3. | ՀՀ կառավարություն | Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին և «Քաղաքաշինության մասին» օրենքում | Առաջարկվում է օրենքների նախագծերում ավելացնել նոր հոդված.<br><br>«***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: » | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր: | | | |